ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.10. Իրանի Իսլամական Հանրապետություն (Իրան)

• • •

Իրանական բարձրավանդակի արևելյան մասում շատ են **սոլոնչակները**՝ քարաղով, խճաքարերով,թաքիրներով ծածկված **Դեշթե Լութ** և **Դեշթե Կևիր**, անապատները, որոնք դասվում են աշխարհի ամենաչորային և ամենաշոգ շրջանների շարքին:

Իրանի ընդերքը հարուստ է վառելիքային, մետաղական և ոչ մետաղական հանածոներով: Երկրի հյուսիսից մինչև Պարսից ծոցի հարակից շրջանները հարուստ են նավթի և գազի պաշարներով: Նավթի հետախուզված պաշարները կազմում են 18,8 մլրդ. տ՝ համաշխարհային պաշարների 9,9%-ը, իսկ գազինը համապատասխանաբար՝ 35,5 տրլն. խ. մ. և 16%: Գազի խոշորագույն հանքավայրը կոչվում է Հարավային Փարս՝ երկրի պաշարների 20%-ը: Վերջինս տեղաբաշխված է Պարսից ծոցի ծանծաղուտում և երկրի հյուսիսարևելքում: Իրանի ընդերքում հայտնաբերվել են նաև սև և գունավոր մետաղների զգալի պաշարներ՝ երկաթաքար, պղնձահիրաքար, մոլիբդեն: Ընդերքում կա նաև ուրան, քարածուխ, շինանյութեր, հատկապես՝ մարմար:

Երկրի տարածքը գտնվում է հիմնականում մերձարևադարձային, իսկ հարավային շրջաններն՝ արևադարձային կլիմայական գոտիներում, որոնց ներսում ՝ աշխարհագրական լայնությամբ,գերիշխող օդային զանգվածներով և տեղական գործոններով պայմանավորված, ձևավորվել է խոնավ և չոր մերձարևադարձային կլիմա՝ անապատա-կիսաանապատային, չոր տափաստանային գերիշխող լանդշաֆտներով: Լեռնային շրջաններում լավ արտահայտված է վերընթաց գոտիականությունը:

Իրանի տարածքն աչքի է ընկնում ջերմային հսկայական ռեսուրսներով, որի կարևոր ցուցանիշը, արևափայլի տևողությունն է: Երկրում ամբողջ տարին օդի ջերմաստիճանը 0°C-ից բարձր է, բացառությամբ լեռնային շրջանների:

• • •

Իրանում շատ են լճերը, բայց դրանք գերազանցապես ունեն փոքր մակերես, սակավաջուր են և աղի: Հյուսիսում Կասպից լիճ-ծովն է, որի նշանակությունը մեծ է Իրանի տնտեսության մեջ:

Թվարկեք մի քանի գործոն, որոնց դերը կարևոր է երկրի տնտեսության համար:

Երկրի ամենամեծ լիճը **Ուրմիան** է (պատմական Կապուտանը) է,որում չափազանց մեծ աղիության պատճառով օրգանական աշխարհը բացակայում է: Լիճն ունի տրանսպորտային նշանակություն: Հատակում կան բուժիչ ցեխեր: Ափամերձ գոտին և բուժիչ ցեխերը օգտագործվում են հանգստի և բուժման նպատակով:

• • •

Իրանի ՏԱԴ-ի համար կարևոր գործոններ են ոչ միայն Արաբական ծովը, Պարսից ծոցն ու Հորմուզի նեղուցը, այլև Պարսից ծոցի ավազանի նավթարդյունահանող երկրների հարևանային դիրքը և Կասպից լիճ-ծովը:

Տարածքի՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք մեծ ձգվածության պատճառով նրա արևմտյան և արևելյան փոքր հատվածները գտնվում են տարբեր ժամային գոտիներում, իսկ մեծ մասը՝ 4-րդ ժամային գոտում: Սակայն հարմարության համար սահմանվել է մեկ ժամային գոտի՝ 4-րդը:

Քաղաքաաշխարհագրական առումով Իրանը սահմանակցում է Արաբական պետությունների լիգայի անդամ երկրների (ԱՊԼ), ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային:

• • •

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը անբավարար է: Տեղումներ շատ են լինում Հարավկասպիական դաշտավայրում՝ մինչև 1700 մմ, իսկ ներքին, անապատային շրջաններում՝ մինչև 100 մմ: Այդ պատճառով երկրի տարածքի մեծ մասում առանց ոռոգման անհնար է բուսաբուծության զարգացումը: